

տեսողաց եւ ի հիացում : Եւ հարցաք թէ վասն է՞ ր է հրաչս այս . եւ ասին թէ ջառներուն հող 160 է բերած աստ որ Քրիստոսի դնով արծաթով դնեցաւ . եւ այլք ասին թէ այն հողուն է բերած , որ հեղաւ պատվական արիւնն Քրիստոսի ի սուրբ քաղաքն յերուսաղէմ , վասն որոյ սքանչելիք եղին :

165

Այլ եւ ցուցին մեզ զՔրիստոսի դաստառակն , զոր աղօթեցաք եւ մեղաց թողութիւն խնդրեցաք : Եւ ինչ տնօրինականք կան եւ չարչարանաց տեղիք , թէ անօթքեթէ բեւեռք , թէ գեղարդ , սուրբ խաչափայտ եւ այլն , այլ 170 եւ սրբոց ոսկերք , նշխարք եւ մասունք բազմահոյլք աստ է հաւաքած , զորս գնելով , զորս գողանարով . զի ամենայն եկեղեցիք լի են ոսկերօք եւ նշխարօք սուրբ վկայիցն :

ԿՊՐՈՅՔ

Եւ ունէր Փափն ՀԲ դարտնալք ըստ ՀԲ աշակերտաց եւ ՀԲ թարգմանչաց եւ ՀԲ աղագաց . զի ամենայն կարտնալք աղղի մի գլուխ է , որպէս ասացաք . զի ի մեծն Հոռոմ ՀԲ աղղ է հեթանոսաց եւ քրիստոնէից . եւ ՀԲ աղղի 5 եկեղեցի , դպրատուն , սբիդալ առանձին :

Եւ կայր մէջ քաղաքին մեծ դպրատուն մի հասարակաց , որ ի հօն ամէն օր դաս կ'ասեն աստուածարանութիւն եւ զայլ մանր ուսմունս՝ զփիլիսոփայական , զերկրաչափական , զաստղաբաշխական , համարողական , զՓ . Ստորոգութիւնս Արիստոտելի եւ զպրակս